ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՇԻՐԻՆՅԱՆ

Հայաստանի գիտական հանրությունը ծանր կորուստ կրեց: 2006թ հունիսի 5-ին, 83 տարեկան հասակում, հանկարծամահ եղավ Հանրապետության ճանաչված երկրաբաններից մեկը՝ Հայաստանի վաստակավոր երկրաբան, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Կոնստանտին Գրիգորի Շիրինյանը:

Կ.Գ.Շիրինյանը ծնվել է 1923թ-ի հունվարի 25-ին, Վանաձոր (Կիրովական) քաղաքում, զինծառայողի ընտանիքում: 1940թ.-ին ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1941թ. Կ.Գ.Շիրինյանը զորակոչվում է զինծառայության:

1942թ.-ին Շիրինյանը ավարտում է Վոտկինսկ քաղաքի (Ուդմուրտիա), ապա՝ Լենինգրադի երրորդ հետևակային ուսումնարանը և ստանում լեյտենանտի սպայական կոչում: 1942թ.-ի օգոստոսից մինչև 1944թ.-ի դեկտեմբերը նա ծառայել է Մոսկվայի ռազմական օկրուգի 20-րդ պահեստային դահուկային բրիգադում, այնուհետև Բելոռուսական զինվորական օկրուգի 45-րդ ուսումնական հրաձգային դիվիզիայում: 1946թ.-ին զորացրվում է և շարունակում ուսումը Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում, որն էլ ավարտում է 1950թ.-ին:

Նույն տարում ընդունվում է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրա «Հրաբխագիտություն» մասնագիտությամբ: 1954թ.-ին Մոսկվայում, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ա.Ն. Զավարիցկու գիտական ղեկավարությամբ, պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի որոշ հանքավայրերի չորրորդական տուֆերը և տուֆոլավաները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունների կախվածությունը տեղադրման պայմաններից» թեմայով և ստանում երկրաբանա-հանքաբանական թեկնածուի գիտական աստիճան:

1953թ.-ից մինչև իր կյանքի վերջը Կ.Գ.Շիրինյանը անընդմեջ աշխատել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, սկզբում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1955-1957թթ. Կ.Գ.Շիրինյանը զբաղեցրել է Ինստիտուտի գիտքարտուղարի պաշտոնը, իսկ հետագայում, մինչև 1989թ., ղեկավարել է ինստիտուտի հրաբխագիտության բաժինը, այնուհետև աշխատել որպես առաջատար գիտաշխատող:

Կ.Գ.Շիրինյանի գիտական հետաքրքրություններն առընչվում էին Հայաստանի տարածքի նորագույն պլիոցեն-չորրորդական հրաբխականությանը, հրաբխային գոյացումների առաջացման և տեղաբաշխման օրինաչափություններին և ոչ մետաղական օգտակար հանածոների (տուֆեր, պեմզաներ, խարամներ և այլ շինանյութեր) նյութական կազմին և նրանց ֆիզիկամեխանիկական հատկություններին:

Կ.Գ.Շիրինյանի հետազոտությունների հատուկ առարկա են հանդիսացել Հայաստանի նորագույն հրաբուխների և հրաբխային ժայթքումների դասակարգումը, հրաբխայնության և երկրադինամիկական իրադրությունների միջև կապերը, ինչպես նաև՝ հրաբխային օջախների առաջացման և ձևավորման խնդիրները:

Կ.Գ.Շիրինյանը հեղինակ և համահեղինակ է 5 մենագրությունների, մոտ 150 գիտական հոդվածների, 10-ից ավելի գիտական հաշվետվությունների և մի շարք գիտահանրամատչելի հոդվածների: Շիրինյանի գիտական ուսումնասիրությունների արդյունքները հայտնի են ոչ միայն Հայաստանում և նախկին ԽՍՀՄ երկրներում, այլ նաև հեռավոր արտասահմանում:

Կ.Շիրինյանը գիտական ելույթներով բազմիցս մասնակցել է Ռուսաստանում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում կայացած մի շարք հեղինակավոր գիտաժողովների:

Երկար տարիներ Կ.Գ.Շիրինյանը հանդիսացել է Միջազգային և նախկին ԽՍՍՀ տարբեր գիտական միությունների և հանձնաժողովների, այդ թվում՝ Մոլորակաբանության միջազգային ասոցիացիայի, Կովկասի միջգերատեսչական պետրոգրաֆիական խորհրդի անդամ, Համամիութենական միներալոգիական ընկերության Հայաստանյան բաժանմունքի նախագահի տեղակալ: Կ.Գ.Շիրինյանը մի քանի անգամ ընտրվել է «Հրաբխականություն և սեյսմոլոգիա» համամիութենական գիտական ամսագրի (Մոսկվա) խմբագրական խորհրդի անդամ: 1974թ.-ին Կ.Գ.Շիրինյանը պարգևատրվել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գովեստագրով, 1981թ.-ին ՀՍՍՀ ԳԱ Վաստակագրով, իսկ 1985թ.-ին ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի որոշմամբ Կ.Գ.Շիրինյանին շնորհվել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը: Մեծ Հայրենական պատերազմին մասնակցելու համար Կ.Գ.Շիրինյանը պարգևատրվել է 4 մեդալներով:

Մինչև իր կյանքի վերջին օրը գիտության մեծ երախտավորը և անխոնջ մշակը վարում էր ակտիվ և բեղմնավոր գիտական գործունեություն, իսկ 2004թ.-ի օգոստոսի վերջերին, չնայած իր պատկառելի տարիքին, մի շարք այլ գիտնականների հետ վերջին անգամ արշավեց դեպի Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաների գագաթները, նպատակ ունենալով իր գիտելիքներն ու փորձը փոխանցել երիտասարդ գործընկերներին և աշակերտներին: Կ.Գ.Շիրինյանի, այդ համեստ, աշխատասեր, բարի մարդու և ազնիվ քաղաքացու կերպարը ընդմիշտ կմնա գործընկերների և աշակերտների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
«Գիտություններ Երկրի մասին» գիտական տեղեկագրի խմբագրություն